ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ
ЧЕСТЬ ИМЕЮ

Կյանքս կտամ Հայրենիքիս, հոգիս՝ Աստծուն, պատիվս՝ ինձ:

Արցախի Խորհրդային սպաների միության թերթ Газета Союза советских офицеров Арцаха

Հիմնադրված է 2020 թվականին :

Թիվ 3 (6), 2021

ԱՐՑԱԽԸ՝ ՀԱՎԵՐԺ ՀԱՅԿԱԿԱՆ

2021 թվականը հոբելյանական է Արցախի Հանրապետության համար: Երեսուն տարի առաջ՝ 1991 թ. սեպտեմբերի 2-ին, բոլոր մակարդակների խորհուրդների պատգամավորների մասնակցությամբ ժողովրդական պատգամավորների մարզային և Շահումյանի շրջանային խորհրդի համատեղ նստաշրջանում ընդունվեց պատմական փաստաթուղթ՝ «Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին»:

Մինչ այդ՝ 1990 թ. օգոստոսի 23-ին, հռչակվել էր Հայաստանի Հանրապետությունը՝ Հայկ. ԽՍՀ Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանի ընդունած նույնպես պատմական փաստաթղթի՝ «Հայաստանի անկախության մասին» Հռչակագրի իրավական ուժով:

Փորձենք հակիրճ անդրադարձով հասկանալ, թե ինչու՞ 1987 թ. վերջերից հերթական անգամ սկիզբ առած արցախահայության շարժումը, որն ի սկզբանե ուղղված էր Մայր հայրենիքի՝ Հայաստանի հետ վերամիավորմանը, կտրուկ ռազմավարական անցում կատարեց դեպի պետական անկախության հռչակում: Շրջանառվող պաշտոնական տեսակետը հետևյալն է. Լեռնային Ղարաբաղի մարզային իշխանությունները, ընտրելով այդ այլընտրանքային տարբերակը, հաշվի են առել մի կողմից՝ ԽՍՀՄ ղեկավարության որդեգրած կոշտ դիրքորոշումը, մյուս կողմից՝ այն հավանականությունը, թե միջազգային կազմակերպություններն Արցախի միացումը Հայաստանին կարող են դիտարկել որպես Ադրբեջանի նկատմամբ Հայաստանի տարածքային հավակնություններ: Բացի այդ, հաշվի է առնվել նաեւ այն փաստը, որ Ադրբեջանը 1991 թ. օգոստոսի 30-ին հռչակել էր իր պետական անկախությունը՝ իրեն հայտարարելով որպես դարասկզբի Ադրբեջանի Դեմոկրատական հանրապետության իրավաժառանգորդ եւ հրաժարվելով խորհրդային իրավաժառանգությունից:

Իրոք, ընդունենք, որ իրադարձությունների զարգացման ընթացքը պարտադրում էր Արցախի անկախ պետականության հռչակման տարբերակը՝ մի կողմ թողնելով, ավելի ճիշտ՝ հետաձգելով եւ, այսպիսով իսկ, վերջնական արդյունքում անորոշ ժամկետով մոռացության մատնելով Շարժման բուն գաղափարաբանությունը, որի հիմնարար իրագործմանն էր նպատակաուղղված մեկ այլ պատմական փաստաթուղթ՝ Հայկ. ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի 1989 թ. դեկտեմբերի 1-ի համատեղ նիստի որոշումը Լեռնային Ղարաբաղը Հայկ. ԽՍՀ-ին վերամիավորվելու մասին:

Բայց, արդյոք, միայն ա՛յդ էր պատճառը և արդյոք, ոչինչ աչքաթող չի՞ արվել իրադարձությունների այդ պատճառահետևանքային շղթայում: Երևի թե առանձնակի մտասևեռում պետք չէ, պարզելու համար, որ արվել է: Բանն այն է, որ Հայաստանում իշխանության գալով Արցախյան շարժման հզոր ալիքի վրա, նորանկախ Հայաստանի կառավարող քաղաքական ուժն այլեւս ավելորդ գլխացավանք էր դիտում արցախյան հիմնախնդիրը եւ հետևողական ջանքեր էր գործադրում այդ ցավից ազատվելու համար, այսինքն՝ «Մավրն արեց իր գործը, Մավրը կարող է հեռանալ»: Մավրի դերում, բնականաբար, Արցախյան շարժումն էր: Ենթատեքստում նույն այդ հոռի սկզբունքի կիրառումն են հավաստում ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանի աղմկահարույց «Պատերազմ, թե՛ խաղաղություն. լրջանալու պահը» հոդվածը 1997-ի նոյեմբերի 1-ին, որպես նրա գլխավորած «ՀԱԿ» կուսակցության գործիչների եռանդուն ջանքերի արդյունք՝ իրավապահ ուժերի հետ բողոքավոր ամբոխի բախումների արհեստական հրահրումները 2008-ի մարտի 1-ին, ընդհանուր առմամբ՝ հայաստանի փոխնիփոխ իրար հաջորդած իշխանությունների հրաժարումը Արցախի Հանրապետության իրավական ճանաչումից, անգամ ԱՀ-ի հետ ռազմաքաղաքական պայմանագրի ստորագրումից, 2018-ի ապրիլյան, այսպես կոչված, «թավշյա հեղափոխությունը» եւ, վերջապես, 44-օրյա պատերազմի ողջ աղետալի ընթացքն ու մեր ժողովրդի համար դրա ծանրագույն հետևանքները:

Արդյոք ժա՛մն է, որպեսզի Մավրը հեռանա: Ոչ իհարկե: Ոչ հիմա եւ ոչ էլ երբևէ: Ոչ մի պարագայում: Արցախահայությունը հոբելյանական տարում նույնպես հաստատուն, աներեր է ազատության իր կամքի ու վճռականության մեջ՝ որպես հաղթանակի հուսալի երաշխիք թիկունքում ունենալով Մայր հայրենիքի եթե ոչ բոլոր, ապա առողջ, հայրենանվեր հանրային ու քաղաքական ուժերի, հայոց համայն սփյուռքի կարևոր զորակցությունը:

Այնպես որ, վստահաբար ասենք՝ շնորհավոր անկախ, ինքնիշխան պետականությանդ 30-ամյա հոբելյանը, սիրելի Արցախ: Դու եղել ես, կաս ու կլինես հավերժ հայկական:

Արմինե ՊԵՏՐՈՍՅԱՆ, հեռուստալրագրող

ՀԻՇԱՏԱԿՆ ԱՐԴԱՐՈՑ ՕՐՀՆՈՒԹՅԱՄԲ ԵՂԻՑԻ

Հուլիսի 27-ին Ստեփանակերտում մատուցվել է հոգեհանգստյան կարգ՝ ի հիշատակ 1983թ. Լիսաբոնում նահատակված 5 նվիրյալ հայորդիների: Տղաները՝ Վաչե Դաղլյանը, Սեդրակ Աճեմյանը, Սիմոն Յահինյանը, Արա Քրդլյանը, Սարգիս Աբրահամյանը աշխարհի ուշադրությունը Հայ Դատին սևեռելու նպատակով 38 տարի առաջ գրավել էին թուրքական դեսպանատունն ու անձնազոհ եղել:

Մայրաքաղաքի Աստվածամոր Սուրբ Հովանու Մայր տաճարում մատուցված հոգեհանգստյան կարգին ներկա էր նաև այս օրերին Բեյրութից վաղուց ի վեր ավանդական դարձած ստեղծագործական այցով Արցախ ժամանած, արցախցիներիս սիրելի Զաքարը՝ լիբանանահայ անվանի երաժիշտ ու խմբավար Զաքար Քեշիշյանը: «Ես տղերքից հիշում եմ Սարգիս Աբրահամյանին, ով մի քանի տարով մեծ էր ինձնից, նույն թաղամասից էինք: Մի օր հավաքեց մեզի, պատանի էինք այն ժամանակ, խոսեց հայ դատից, ազգային հարցերից: Նույնիսկ հիշում եմ, ասաց՝ մենք պետք է վերադառնանք մեր ազգային մշակույթին: Ինքը մշակութային զարգացվածությամբ մեկը չէր, ինքը շատ լավ հայ մըն էր: Դրանից մի շաբաթ հետո կատարվեց դեպքը,- հիշում է Զաքար Քեշիշյանն ու շարունակում,- տղաների կատարածն այդ տարիներին համայն հայության շրջանում նոր ոգևորության և աշխարհում նոր իրողությունների հիմք դարձավ»:

Մայր տաճարում հոգեհանգստյան կարգի ավարտից հետո ՀՅԴ Արցախի կառույցի կենտրոնական գրասենյակում անցկացվեց հուշ-երեկո: Միջոցառման մասնակիցների՝ կուսակցության երիտասարդական թևի ներկայացուցիչների և հրավիրյալների առաջ թեմատիկ բանախոսությամբ հանդես եկավ Արցախի պետհամալսարանի ավագ դասախոս, պատմաբան Լեռնիկ Հովհաննիսյանը: Բանախոսի հաղորդմամբ՝ աշխարհի շատ երկրների օրացույցերում այդ օրը գուցե թե սովորական կամ ահաբեկչական որակվի, բայց հայ ժողովրդի համար դա նվիրումի օր է, քանզի Լիզբոն 5-ի տղաների անձնազոհ քայլից հետո, նախ, Հայոց ցեղասպանության ճանաչման, ապա հատուցման համար Հայ դատի պայքարը նոր թափ առավ: «Սա սովորական անձնասպանություն չէր: Սա անարդարության, աշխարհին թմբիրից հանելու մի գործողություն էր, որը տղաներն իրականություն դարձրին իրենց կյանքի գնովե,- նշել է պատմաբանը:

Այնուհետեւ Լեռնիկ Հովհաննիսյանը պատասխանել է ներկաների հարցերին:

Հիշատակի միջոցառմանը կազմակերպվել է նաև վավերագրական կինոնկարի դիտում՝ նվիրված Լիսաբոնի հինգ անձնազոհ հայորդիների վառ հիշատակին:

ԸՆԿԵՐՆ ԸՆԿԵՐՈՋ ՄԱՍԻՆ

ԿՅԱՆՔԻ ԴԺՎԱՐԻՆ, ԻՄԱՍՏՆԱԼԻ ՈՒՂԻ

Լրացավ Արցախի արժանավոր զավակներից մեկի՝ իրավապահ մարմինների նախկին աշխատակից, իրավաբան, կուսակցական գործիչ, Արցախյան շարժման ակտիվ մասնակից Յուրի Միսակի Ավանեսյանի 85 -ամյակը:

Հոբելյարի ընտանեկան օջախում, հարազատների հետ մեկտեղ, շնորհավորանքի էին հավաքվել նաև վաղեմի գործընկերներ ու կուսակից ընկերներ հայրենի Մարտունուց, մայրաքաղաք Ստեփանակերտից: Տոնական միջոցառման մասնակիցների ծափողջույնների ներքո ջերմորեն շնորհավորելով, Արցախի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Բահադուր Դավթյանը, ի գնահատումն հայրենիքին Յուրի Ավանեսյանի մատուցած ծառայությունների և կուսակցական աշխատանքում ներդրած ավանդի համար հոբելյարին հաձնեց Կենտկոմի Պատվոգիրը, իսկ «ԱՀ խորհրդային սպաների միություն» ՀԿ նախագահ, ազգային անվտանգության պահեստի գնդապետ Հենրիխ Մովսիսյանը՝ Հայրենական մեծ պատերազմում Հաղթանակի հուշամեդալ եւ իր ղեկավարած կազմակերպության Պատվոգիրը:

Կյանքի դժվարին, բայց և իմաստնալի ուղի է անցել Յուրի Ավանեսյանը: Ծնվել է 1936թ. հուլիսի 22-ին՝ Մարտունու շրջանի Գիշի գյուղում: Տակավին մանուկ հասակից ճաշակել է որբության դառնությունը. հայրը, խիզախաբար մարտնչելով, զոհվել էր Մեծ հայրենականի մարտադաշտերում, իսկ մայրը, չդիմանալով ծանր հիվանդությանը, մահացել էր 1941-ին, եւ ծնողազուրկ տղան մինչև բանակ զորակոչվելը գտնվում էր Վաղարշակ հորեղբոր եւ նրա ընտանիքի խնամքի ներքո: Ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը, ապա՝ պարտադիր ծառայությունը խորհրդային բանակում, որից հետո սկիզբ է առել երկարամյա աշխատանքային գործունեությունը՝ հյուսնի աշակերտ, շրջանային միլիցիայի աշխատակից, հեռակա մասնագիտական ուսումնառություն Բաքվում, տեղամասային տեսուչ, հանրային սեփականության հափշտակությունների դեմ պայքարի գծով իրավապահ մարմնի պատասխանատու, ապա դարձյալ ուսում, այս անգամ՝ Մոսկվայի իրավաբանական ակադեմիայի Ռոստովի բաժանմունքում, որն ավարտելուց հետո՝ ավագ քննիչի աշխատանք շրջմիլիցիայում, իսկ արցախահայության ազգային-ազատագրական պայքարի տարիներին՝ Շարժման ակտիվ մասնակից, ադրբեջանական իշխանությունների կողմից մշտապես հետապնդումների ենթակա: Պատերազմի ավարտից հետո՝ 1995-96 թթ. փաստաբան եւ համաժամանակ հյուրանոցի տնօրեն էր Մարտունիում, ապա ԼՂՀ ՊԲ 2-րդ պաշտպանական շրջանի իրավաբան, որտեղից եւ կենսաթոշակի է անցել 2002-ի փետրվարին: Միաժամանակ եռանդուն կուսակցական կազմակերպիչ է: Տարիներ շարունակ եղել է կոմկուսի տարածքային սկզբնական կազմակերպության քարտուղար, ապա՝ Արցախի կոմկուսի Մարտունու շրջկոմի երկրորդ քարտուղար եւ առ այսօր հաջողությամբ կյանքի է կոչում կուսակցական աշխատանքի կազմակերպչի իր խնդիրները:

Շնորհավոր 85-ամյակդ՝ սիրելի ընկեր: Երկար կյանք քեզ, անսպառ ավյուն ու կորով քո նվիրումին՝ ընտանիքիդ և հայրենի երկրիդ:

Բաբկեն ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ
Արցախի ԿԿ
Մարտունու շրջկոմի
1-ին քարտուղար

«Պատիվ ունեմ» թերթի խմբագրակազմը միանում է շնոհավորանքներին:

ՄԱՀ ԻՄԱՑԵԱԼ՝ ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ

Նվարդ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

«ԴՈՒ ՎԱԽԿՈՏ ԵՍ, ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ»

Հայասեր Հովսեփյանի հետ պայմանավորվել էինք հանդիպել 2020-ի աշնանը, ավելի ճիշտ՝ հոկտեմբերին՝ բանաստեղծական իր նոր շարքի շուրջ զրուցելու:

Մինչև այդ արդեն հեռակա ծանոթ էի իրեն: Ժամանակ առաջ մամուլում կարդացած նրա «Դու վախկոտ ես, խաղաղություն» բանաստեղծությունը ցավալիորեն ակոսել էր հոգիս և մնացել ինձ հետ:

...Դու վախկոտ ես,
խաղաղություն:
Տեսել ես կարմիր արյունը՝
ընկած զինվորի
և անամոթաբար միշտ
լքում ես ինձ,
երբ ես կանգնում եմ
այս արյունոտ խրամատում,
ինչպես հոգին է լքում մարմինը
սպանված իմ ընկերոջ:
Լքում ես... և հակառակորդն
անարգել
կրակում է ինձ վրա:
Կանգ առ,դավաճան,
ես եմ զրահը քո կրծքի
և իմ սիրտը՝
թիրախ՝ ոսոխին:
Մնա իմ թիկունքում,
այնտեղ մանուկներ կան՝
անմեղ,անհոգ...
Կանգ առ, անամոթ...

Հիրավի, բանաստեղծության յուրաքանչյուր բառը սրտի կնիքն ունի, որ ծնվել է հուզմունքի ծովացած եռքից, և որն իրավունք ունի ասելու մահվան ու կյանքի սահմանագծի սարսուռն ապրած զինվորը: Իսկ այդ սահմանագիծը նրա համար 2016-ի ապրիլին էր:

Այնժամ 27 տարեկան էր, ՊԲ սպա, և զինվորավարի էր գնահատել իրավիճակն ու զինվորավարի էլ «պատասխանատվության» կանչել մեզնից այս է քանի դար փախչող խաղաղությանը՝ ոչ միայն սաստելու, այլև՝ ուժ հաղորդելու՝ ասելով՝ «Ես եմ զրահը քո կրծքի»: Այնինչ խաղաղությունն այդ անգամ էլ խուսանավել է, վախկոտ հայացքը փախցրել՝ իր հողի ու հայրենիքի պաշտպանությանը զինվորագրվածի անհահանջ հայացքից: Եվ զինվորի չափածո տողերն իրենց շնչով ցավագնորեն շարունակել են հոլովույթի մեջ առնել չմարսվող տագնապով լցվող մեր օրերը:

Ծանոթության ժամանակ իր պղնձակոփ բառերի ատաղձը փորձել եմ տեսնել նրա դեմքին: Իսկ նրա համեստ հայացքում շիկնանքն էր՝ ի պատասխան այն գովեստի, թե՝ բանակում ծառայող սպան որքան պոետիկ շեշտեր է տեսնում իր դժվարին աշխատանքում:

ԱՀ գրողների միության միջոցառումներին հազվադեպ էր նրա ներկայությունը, երբեք չլսվեց նրա ձայնը, հեռու էր բարձրագոչ խոսքից, ասես, ի ներս էր առնում ոչ միայն տեսածն ու լսածը, այլև այդ ամենից անտես խորախորհուրդը՝ մեզնից փախչող, վախկոտ խաղաղության երերուն հայացքի տագնապում:

Երևի զինվորավարի գիտեր նաև, որ նոր պատերազմն անխուսափ է, և ինքը հայրենիքի փրկության համար կյանք չխնայած տղաների փոխարեն էլ պիտի մնար դիրքերում: Ինքն արդեն երդվել էր նաև բանաստեղծությամբ:

Իմ հոգին արարչությունն է
Աստծո,
որ երկինք պիտի տանեն
անկումիս
սպասող հրեշտակները
ստրկամիտ:
Բայց մարմին ունեմ ըմբոստ,
որ տվել եմ խրամատներիդ
արնածարավ,
և ծածկում եմ, ահա, քո
մարմինը
փխրուն մարմնով իմ
պողպատե,
բեկելով սլացքը դեպի
քեզ սուրացող
մահաբեր գնդակների:

Հայասեր Հովսեփյանը ծնվել է Մարտունու շրջանի Խնուշինակ գյուղում: Համեստ, աշխատավոր ընտանիքի զավակ էր, երկու քույրերի եղբայր: Դպրոցի հայոց լեզվի և գրականության վաստակաշատ ուսուցչուհի Իրինա Հարությունյանի խոսքով, իր շնորհալի սանիկը ստեղծագործում էր դեռ 7-րդ դասարանից: Ամաչում էր ուսուցչուհուն ներկայացնել իր բանաստեղծությունները և միայն 10-րդում դասընկերները բացեցին նրա գաղտնիքը: Պատանու համար անչափ կարևոր էր սիրելի ուսուցչուհու ոգևորիչ խոսքը, քաջալերանքը: Իսկ մանակավարժի փորձառու հայացքն արդեն նկատել էր հատկապես ազատ թեմայով շարադրություններում երևացող նրա գեղեցիկ, պատկերավոր խոսքը: Ուրեմն, բանաստեղծություններն եկել էին լրացնելու պատանեկան հախուռն էության գունեղ ելևէջները:

Եվ Հայասերը, չնայած զինվորական ծառայությանը, ողջ կյանքում մնաց գրականության տիրույթում, բանասիրական բարձրագույն կրթություն ստացավ: Զինվորական ծառայությունից մի քանի տարի հետո անցավ մանկավարժական աշխատանքի: Հայոց լեզու և գրականություն էր դասավանդում հայրենի գյուղի հարևանությամբ գտնվող Ծովատեղում, այնուհետև՝ Քաշաթաղում:

Երկու սրբազան բարձունք մնացին նրա համար հավերժ նվիրական. հայրենիքն ու բանաստեղծությունը, որոնց և ծառայեց անմնացորդ: Անշուշտ, այդ երկուսն իր հոգում այնքան միահյուս էին, որ միմյանց կենսական լիցքեր փոխանցելով՝ գալիքում առավել հզոր շեշտերով պիտի առաջնորդվեին, եթե անհիշյալ պատերազմը չաղճատեր նրանց լուսեղեն պատկերները:

2020-ի սեպտեմբերի 27-ը կրկին զինվորագրեց նրան, Հայասեր Հովսեփյանը կրկին հայրենապաշտպան էր՝ առաջնագծում: Իր պաշտելի Արցախը վերստին վտանգի մեջ էր, իսկ ուրիշ տեղ նման հայրենիք չկա, ուր «...ամեն մի քար լուռ պատմաբան է, իսկ ամեն ժայռ թշնամու դեմ վահան, ամեն ծառ կռվից մի բեկոր ունի կրծքում և ամեն ծաղիկ մի նահատակի սրտից է ելնում...»: Բանաստեղծի խոսքով՝ իր հայրենիքում օտարերկրացին անգամ հայերեն է քայլում և ամեն, ամեն ինչ այստեղ հառնում է հայերեն: Բայց կրկին պատերազմն էր մոլեգնում՝ մեզնից ամենաթանկը խլել փորձող դարավոր թշնամու դիվային սադրանքով: Զարկեցին և ... զարկվեցին հայոց քաջերը, որ ապրի հայն ու Հայաստանը...

Ժամանակից առաջ ընկնելով, զինվորի ու բանաստեղծի ներքնատեսությամբ Հայասեր Հովսեփյանը հայրենապաշտպանների իր սերնդի կարճատև, բայց կյանքով առլեցուն ուղին է մատնանշել՝ իբրև մարտակոչ ազդարարելով.

Ես կառչել եմ այս հողին
իմ զորությամբ ,
ինչպես ծառն՝ իր
արմատներով,
ինչպես քարն՝ իր
ծանրությամբ...

... 2020-ի աշնանը կայանալիք մեր հանդիպման սպասումը պռնկեպռունկ լցվեց դաժան պատերազմով, որն ավերեց և մեր երկիրը, և մեր հոգին:

32-ամյա Հայասեր Հովսեփյանն ընկավ վասն հայրենյաց՝ 2020-ի նոյեմբերի 8-ին... Զավակի կորստով որբացան ծնողները: Տեսնես սգացող քույրերը ճանաչո՞ւմ են եղբոր «արցախաչյա» սիրուն, ում նվիրել է այս տողերը.

Բայց ես սիրում եմ կյանքն
առավել ուժգին, քան կարող եմ,
որովհետև կյանքի մեջ
կաս Դու,
Դու՝ արցախաչյա իմ սեր...

Հիմա ապրողներիս ծվատված հոգիներում անլուր տանջանքով փորձում ենք անխաթար պահել զոհյալների հիշատակը: Եվ Հայասեր Հովսեփյանի հետ չկայացած, բայց և իմ հոգում չլռող զրույցը փորձել եմ ուրվագծել նրա բանաստեղծությունների օգնությամբ: Իսկ այդ տողերում ոչ միայն իմ, այլև բոլորիս հարցերի պատասխաններն են:

Վովա ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ՀՐԱՄԱՆԱՏԱՐ, ԴՈՒ ԱՊՐՈՒՄ ԵՍ ՄԵՐ ՍՐՏԵՐՈՒՄ

Յուրի Բաբաջանյանը ծնվել է 1962 թվականի հունվարի 19-ին, Ղուզե Ճարտարում: Մինչև 8-րդ դասարանը սովորել է Ճարտարում, այնուհետև ընտանիքով տեղափոխվել են Տաջիկստանի մայրաքաղաք Դուշանբե, որտեղ և ստացել է միջնակարգ կրթություն: 1981-83թթ. ծառայել է խորհրդային բանակում: Ավարտել է Դուշանբեի պոլիտեխնիկական ինստիտուտի ավտոճանապարհաշինարարական ֆակուլտետը: Որպես ինժեներ՝ աշխատել է Դուշանբեում: Սպիտակի երկրաշարժի մասին լսելով՝ շտապել է Սպիտակ, որպեսզի իր օգնությունը ցույց տա տուժածներին, իսկ հետո, Արցախյան շարժման հետ կապված, ընտանիքով տեղափոխվել է հայրենի Ճարտար, անդամագրվել ինքնապաշտպանական ջոկատին, դարձել հրամանատար:

Մեծ ու յուրահատուկ ներդրում է ունեցել Ճարտարի ինքնապաշտպանական ջոկատների կազմավորման մեջ: Մասնակցել է Վերին Վեյսալուի, Ուրյանա լեռան, Ղաջարի, Աղդամի, Խազազասարի, Գևորգավանի, Մարտակերտի շրջանի մարտերին: Զոհվել է 1994 թվականի փետրվարի 4-ին, Քավթառլու տեղամասում:

Հետմահու պարգևատրվել է «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով: Ամուսնացած էր, ունի երկու դուստր: Հանգչում է Ճարտար քաղաքի գերեզմանոցում:

«Դուշանբեն շատ գեղեցիկ քաղաք է,- ասում էր մեր հերոսը, - այնտեղ կան հետաքրքիր և չկրկնվող ճարտարապետական կառույցներ, բայց երկրային աշխարհի ամենասիրելի և ամենասքանչելի վայրն իմ Արցախ աշխարհն է, իմ հարազատ ծննդավայր Ճարտարը»: Յուրի Բաբաջանյանն՝ ընկերների, հարազատների և շրջապատի կողմից սիրված ու հարգված Յուկան, սրտի թելադրանքով ու հոգու կանչով վերադարձավ հայրենիք: Ուներ բարձրահասակ և գեղեցիկ կազմվածք, խրոխտ հայացք, ճկուն ռազմավարական միտք, միշտ պատրաստ էր արյան գնով պաշտպանել և անկախացնել մեր մի բուռ հողը, որ ոսոխն էր ուզում խլել մեզնից: Փայլուն ռազմավարական գիտելիքներով զինված հրամանատարը գիտեր՝ ինչպիսի ծրագիր մշակել թշնամուն խոցելու համար: Յուրի Բաբաջանյանը, որպես ազգի նվիրյալ, անմնացորդ էր: Նա շատ բարի էր, քաջ, ինքնավստահ և իր ունեցած ամեն ինչը՝ խելքը, մարտական ունակություններն, անգամ կյանքը ծառայեցնում էր հայրենիքին:

1992-94թթ. Ճարտարի գումարտակի հրամանատարն է եղել Յուրին: Լեգենդար Ավոն շատ էր սիրում ու վստահում նրան, ով գումարտակի սիրտն ու հոգին էր: Յուրին իր դուստրերի մեջ սերմանել է հայի լավագույն գծերը: Դուստրերն առաջնորդվել և մինչ օրս առաջնորդվում են հոր տեսակետներով և գաղափարներով: Որպես հայր՝ նա իրեն դրսևորելու շատ քիչ ժամանակ ունեցավ, բայց այդպիսի արժեքներ կրող մարդը հետագայում պիտի լիներ ամենից հոգատար հայր և իր դուստրերին տար լավագույնն ու արժեքավորը:

-Հայրս իմ իդեալն է ցանկացած առումով,- ասում է ավագ դուստրը՝ Անուշը: Հոր հետ կապված շատ քիչ հիշողություններ ունի, որովհետև ժամանակի մեծ մասը նա դիրքերում էր անցկացնում: Դուստրերի հիշողությունների արթնացման ու վերապրման հաճելի ու ցավով պարուրված ժամանակահատվածը հունվարն է: Անուշը պատմում է.

- Հիշում եմ՝ մենք գտնվում էինք Սարուշենի մոտակայքում, որտեղ ապաստանել էինք ապահովության համար: Հայրս տանկով եկավ մեզ տեսության, երևի տան կողքով էր անցնում: Ես էլ շատ հետաքրքրասեր էի, խնդրեցի, որ ցույց տա այդ մեծ ու հետաքրքիր «մեքենան»: Տարավ, նստեցրեց տանկի մեջ, ու ահագին տեղ քշեցինք այն: Դրանից հետո ես միշտ պարծենում էի, որ հինգ տարեկանում տանկ եմ քշել:

Տիկին Շողերը, վաղաժամ կորցնելով ամուսնուն, չկոտրվեց և չթուլացավ, այլ կորստի ցավը հաղթահարելով՝ մեծացրեց և կրթեց երկու դուստրերին: Կինը ցավում է, որ ամուսինը չտեսավ այնքան երկար սպասված խաղաղությունը:

32 գարուն ապրած խիզախ հայորդին հասցրել է մեծ հարգանք, սեր ու պատիվ վայելել հանրության շրջանում: Շատերն են արյան գնով պաշտպանել հայրենիքը, սակայն քչերն են հայրենիքից դուրս գտնվելով, թողնելով ամեն ինչ՝ եկել հայրենիք, այն կյանքի գնով պաշտպանելու և սերունդներին կապույտ, խաղաղ երկինք պարգևելու համար:

Մարդկային բարձր հատկանիշներով օժտված ազգի նվիրյալն այսօր ֆիզիկապես մեզանից բացակայում է, բայց հոգեպես բոլորիս հետ է:

Սիրելի հրամանատարին մենք բացակա չենք դնում, ոչ ոք չի մոռացել հայի լավագույն տեսակ Յուրի Բաբաջանյանին:

25 июля в Российской Федерации отметили День Военно-Морского Флота России

МИТИНГ ПАМЯТИ АДМИРАЛА ФЛОТА ИСАКОВА В СТЕПАНАКЕРТЕ

25 июля в городе Степанакерт в честь празднования в России 325-летия образования Военно-Морского Флота военнослужащие миротворческого контингента в Нагорном Карабахе, представители духовенства, студенты и школьники почтили память Героя Советского Союза, Адмирала Флота Ивана Исакова.

Бюст Героя Великой Отечественной войны адмирала Исакова, изготовленный из меди, установлен на улице, носящей его имя в г. Степанакерт. Участники митинга почтили память минутой молчания, возложили венки и цветы к памятнику.

Адмирал Исаков – один из самых известных советских военачальников, который внес неоценимый вклад в победу во Второй Мировой войне и развитие советского флота.

Именем адмирала назван Большой противолодочный корабль ВМФ «Адмирал Исаков» (в строю был в 1970-1994 гг.). Имя его присвоено также подводной горе в Тихом океане, которую открыли советские океанографы.

Т/Рцентр МС РФ в Нагорном Карабахе

От редакции

Памятник И. С. Исакову установлен в Ереване (2005). В районе посёлка Горный Туапсинского района Краснодарского края, на месте ранения И. С. Исакова в 1942 г., в 2013 г. открыт памятник адмиралу Исакову и военным морякам – участникам Великой Отечественной войны. Именем адмирала назван проспект в Ереване, улицы в городах Санкт-Петербург (1989), Степанакерт (НКР), в городе Туапсе, в посёлке Горный Туапсинского района Краснодарского края. Именем выдающегося адмирала названа школа N132 в Ереване (1967) и школа в посёлке Горный Туапсинского района. В советское время его именем были названы совхозы в Мартунинском и Мартакертском районах Нагорного Карабаха.

"ЭРДОГАН СТРОИТ ИМПЕРИЮ": Сатановский о декларации с Азербайджаном в Шуши Турецкий президент, по словам эксперта, использует для достижения этой цели два инструмента – пантюркизм и политический ислам.

Турция во главе с Реджепом Эрдоганом строит новую империю, декларация в Шуши - очередной шаг на этом пути, сказал Sputnik Армения директор Института Ближнего Востока Евгений Сатановский.

Президент Турции Реджеп Тайип Эрдоган в сопровождении азербайджанского коллеги Ильхама Алиева 15 июня посетил сначала Варанду (Физули), а затем и Шуши, где состоялось подписание двустороннего соглашения (декларации о союзничестве).

По мнению Сатановского, в документе все прямо написано, включая оборонные вопросы.

"Азербайджан и Турция в настоящий момент являются союзниками. Конечно, подписание в Шуши является серьезным символом. Но у Эрдогана достаточно большие планы на постсоветское пространство, особенно страны тюркского мира, да и на тюркские регионы России. Он этого никогда не скрывал и не скрывает. Вот их он и реализует", - сказал Сатановский.

У Эрдогана два инструмента построения новой турецкой империи. Первый – пантюркизм, второй – политический ислам, который он использует в регионах за пределами тюркского мира. В них пантюркизм популярностью не пользуется.

На постсоветском пространстве к этому инструменту относятся с большой осторожностью. Это заметно, в частности, по позиции руководства Туркменистана.

"Эрдоган строит новую империю, мы видим это, в том числе, по Шушинской декларации", - отметил Сатановский.

Азербайджан в этом формате выступает в качестве источника нефти и газа, в качестве достаточно важного и емкого рынка. Что касается суверенитета, то это понятие условное. Если на него есть влияние с точки зрения экономического потенциала, военных возможностей, то проблем с этим не возникает.

"Азербайджану, как минимум, поддержка Турции принесла победу в карабахской войне", - отметил Сатановский. Карабах воевал не с Азербайджаном, а Турцией – генералитетом, операторами беспилотников, наемниками из Сирии. Если бы не российские войска, то от армянского Карабаха не осталось бы и следа.

Что касается того, что будет через 4,5 года, когда будет подходить к концу 5-летний мандат российских миротворцев в Карабахе, то прогнозировать сейчас не имеет смысла. Неизвестно, что может произойти уже через год.

ru.armeniasputnik.am

Ашот БЕГЛАРЯН, писатель, публицист

ДИПЛОМАТИЧЕСКИЙ ШАБАШ В ОККУПИРОВАННОМ ШУШИ

Бакинский режим организовал очередную провокацию на временно оккупированных территориях НКР. На этот раз было проведено дипломатическое сборище в историческом культурном центре Арцаха – г. Шуши с участием послов в Азербайджане. Не думается, что все они безоговорочно поддерживают оккупацию карабахских земель, тем не менее официальному Баку удалось вовлечь в свою авантюру, а по сути – преступное деяние, представителей свыше 40 стран.

Главное, бакинской провокации не поддались ведущие мировые державы – США, Российская Федерация и Франция, являющиеся странами-сопредседателями Минской группы ОБСЕ – структуры, официально наделённой мандатом урегулирования азербайджано-карабахского конфликта. И позиция международных посредников совершенно понятна – у них нет никакого желания даже косвенным образом утверждать результаты преступной коллективной агрессии Азербайджана, Турции и международного терроризма в отношении маленького самоопределившегося Арцаха. Одновременно тем самым державы фактически указывают место зарвавшемуся бакинскому диктатору, пытающемуся поставить себя выше международного сообщества и его законов. В этом плане характерны непомерно наглые слова экс-главы азербайджанского МИД Тофика Зульфугарова. «Минская группа окончательно умерла... Послов трёх государств подвергнуть официальной и общественной изоляции (не принимать их и не принимать их приглашения на любые мероприятия) до тех пор, пока они не поедут в Шушу. Всех, кто нарушит данное

правило, подвергать критике в СМИ», – написал бывший министр на своей странице в Facebook.

Вот так – ни много, ни мало. Азербайджан теперь стал угрожать мировым державам. Невольно встаёт перед глазами комическая картина: моська лает аж на трёх слонов сразу.

Как отмечают эксперты, страны-посредники по-прежнему считают карабахский конфликт, вопреки циничным утверждениям Алиева, неурегулированным и, отказавшись от участия в пропагандистском шабаше в Шуши, они тем самым дают понять, что не считают город и Нагорный Карабах в целом территорией Азербайджана, и настаивают на возобновлении посреднической миссии, направленной на настоящее, долгосрочное решение проблемы.

Визит послов в Шуши является логическим продолжением недавнего незаконного посещения оккупированного города президентом Турции Реджепом Тайипом Эрдоганом, стремящегося установить новый военно-политический статус-кво в регионе в ущерб интересам как стран региона, так и Российской Федерации с её традиционным решающим влиянием в Закавказье.

Организовывая поездку послов в оккупированный Шуши, где сегодня тотально уничтожается всё армянское, Баку пытается заручиться поддержкой международного сообщества в дальнейших своих святотатствах в отношении религиозно-культурного наследия истинных хозяев города, с тем, чтобы по примеру Нахичевана полностью стереть след армянского присутствия в этом исторически значимом для арцахцев городе.

Столь предосудительный с этической и моральной точек зрения визит однозначно является также провокацией против мира и безопасности в регионе, так как своими пропагандистскими трюками на фоне лживых заявлений о нормализации отношений с Арменией и армянским народом бакинский режим последовательно нагнетает армяноненавистнические настроения, подрывая международные усилия по установлению региональной стабильности и разжигая новый конфликт.

Приходится ещё и ещё раз констатировать, что, объявив Шуши «культурной столицей» Азербайджана, Эрдоган и Алиев на самом деле преследуют цель превращения города в форпост радикализма, экспансионизма и пантюркизма. Эрдоган уже в открытую и с гордостью подчёркивает роль турецкой стороны в захвате Шуши, цинично объявляя миру о принадлежности города в том числе и Турции. Получается, что оккупация Арцаха и агрессивные поползновения в отношении Армении являются началом реализации пантюркистских программ...

Отрадно, что главные мировые игроки не поддались на очередную бакинскую провокацию, сказав «нет» азербайджанской политике шантажа, угроз, лжи, фальсификаций и экспансионистским планам Анкары. В противном случае под угрозой, без преувеличения, окажутся глобальная безопасность и весь цивилизованный миропорядок.

Эдуард МОСЕСОВ, журналист, беженец из Баку

ВСЕМИРНЫЙ ДЕНЬ БЕЖЕНЦЕВ

20 июня. Всемирный День беженцев. Да, ныне этот день стал международным. Международным потому, что весь мир погряз в беженстве. Десятки миллионов беженцев скитаются по планете, и человечество лихорадочно ищет способ остановить нарастающую интенсивность потоков жертв нечеловеческого зла. Но нынешний этап беженства – лишь печальный итог политических авантюр и преступных заблуждений, горький плод антинародных и антигуманных режимов и, в первую очередь, попустительства по отношению к вершителям геноцидов, приводящих к массовому исходу людей из своих земель и пополняющих потоки беженцев.

Беженка-писательница Эмма Петросян при вынужденном исходе из Баку в январе 1990 года.

Слово «беженец» вторглось в сознание человечества в конце прошлого века, когда Османская Турция вынуждала миллионы людей-армян, греков, ассирийцев, езидов и других покидать земли своих предков в поисках новой родины.

В многовековой истории армянского народа слово «беженец» встречается не раз. «Поставленная на рубеже двух миров и призванная, по определению В.Брюсова, служить примирительницей двух различных культур: той, на основе которой вырос весь христианский Запад и той, которая представлена мусульманским Востоком, Армения не раз была вынуждена вести отчаянную борьбу за свою национальную честь, свободу и независимость». Геноцидальная политика Османской Турции, делавшая невозможным пребывание в ее пределах представителей христианских народов, принуждала миллионы людей искать прибежища в других странах, становиться беженцами. И первым народом, ставшим жертвой этой политики, стал армянский народ. 1915 годом обозначаем мы дату геноцида армян в Турции. Но 1915 год это пик варварства осатаневшей Турции. Геноцид начался раньше. Еще до 1915 года были убиты десятки тысяч армян только за отказ принять мусульманство, за несколько лет до 1915 года правительством Турции было дано разрешение на депортацию армян, был издан «Закон о порядке обращения с недвижимым и движимым имуществом» армян, которое объявлялось покинутым и на которое налагался арест, а затем и право на его реализацию. И поток беженцев, теряя по дороге детей, стариков, физически слабых, преодолевая водные преграды, пустыни добирался до Сирии, России, Франции, США, других стран, обретая новую родину.

1915 год этот поток многократно увеличил. Уничтожение армян было возведено в ранг государственной политики. «Армяне стоят на нашем пути осуществления всетурецких священных устремлений. Мы вынуждены стихийно уничтожать на пути все, что препятствует исполнению наших национальных устремлений», – обосновывал свои зверства один из лидеров Геноцида Джамал- паша, отдавая приказ своим аскерам уничтожать, не жалея никого – ни детей, ни стариков, ни больных.

Устремления же эти известны, они не исчезли и сегодня: создание Великого Турана, мусульманской империи под верховенством Турции. Но создание этого утопического образования невозможно без аннексии больших территорий у России. И тут, как кость в горле, христианская Армения, не желающая подыгрывать Турции в ущерб России. «Вы всегда с русскими. Вы их авангард, а русские наши заклятые враги», – говорил все тот же Джамал паша. Мощной силой своего гениального ума это хорошо понимал Петр Первый, когда в своих многочисленных Указах говорил: «...мы, с особливой ко оному народу имеющейся нашей императорской милостью, через сие объявляем, чтобы они внутрь нашего государства безо всякого опасения приезжали, и ежели пожелают, селились и жили...».

И сегодня уже миллионы армян живут в России, обретя здесь свою вторую Родину и обогащая ее своими талантами». Союз с Россией – свободный выбор народа, имеющего право на выбор достойного соратника, чтобы ускорить славную победу над общим врагом», – говорил великий сын Армении Гарегин Нжде. Да, дружба с Россией во многом способствовала сохранению армянской нации. Трудно недооценивать в этом особую роль русского оружия.

И тем не менее и Россия, и мир в целом легко пережили геноцид христианских народов в Турции, что привело к повторению этих злодеяний – сперва в Германии, а затем и в Азербайджане. Холокост все же получил заслуженную оценку. Зверства, творимые фашистами, вызывают у каждого содрогание и гнев. Но геноцид армян в Азербайджане, ставший как бы калькой с турецких событий, не получил должной оценки. Ведь там было то же самое, что в Турции – вначале ущемление политических прав, культурных, языковых ограничений, вынуждающих армян искать места проживания вне Азербайджана, учиться в вузах других стран. Ну, а с развалом СССР, что неизбежно стало и развалом Азербайджана, когда входившая какой-то период, на правах автономии, Нагорно-Карабахская область объявила о своем суверенитете, последовал чисто турецкий ответ – резня, костры из трупов, изнасилования под гогот толпы и многое другое, что вызывает содрогание при одном только упоминании этих звериных (пусть простят меня звери) проявлений. Сегодня Баку, Сумгаит, другие города и районы Азербайджана, охваченные в те дни сатанизмом, продолжают вакханалию, сравнивая с землей наши кладбища, снося памятники, в том числе и героям нашей совместной истории. Снос памятника маршалу Коневу в Чехословакии вызвал бурю негодования в России. Что-то не слышно негодования по поводу сносу памятников маршалам Баграмяну, Бабаджаняну в Азербайджане, на их Родине.

Зная все это, трудно осуждать народ Арцаха в желании строить свое независимое, сильное государство, что он сейчас с завидным достоинством и делает. «Невозможно считать возможным пребывание Нагорного Карабаха в составе Азербайджана», – сказал академик Андрей Сахаров. Это очевидный факт. Ну а сейчас, когда он уже состоялся как суверенное, демократическое государство, со всеми присущими такому государству атрибутами, как законодательная, исполнительная власть, армия, готовая отстоять это государство (что уже демонстрировала не раз), с народом, с оружием в руках возвратившим земли своих предков, где еще в 5 веке создавал свои первые школы великий Маштоц, автор армянского алфавита, конечно же, этот вопрос в Армении даже не рассматривается.

И мы уверены, что большая часть армян, сегодня ставших беженцами и осевших на чужих территориях, когда то возвратится на Родину. И будем строить свободную, сильную Армению. Мы ведь народ-созидатель. В неимоверной схватке со злом, коварством, варварством, бесчеловечностью потеряв часть Родины, армянский народ выжил. Потоки беженцев оседали на новых землях, не становясь обузой для приютивших нас народов, а внося заметную лепту в их жизнь и заслуживая их благодарность. Сотни армянских имен стали гордостью этих стран. Имена Шарля Азнавура, Анри Труайя во Франции, Вильяма Сарояна и Кирк Киркоряна в США, братьев Орбели в России, Галуста Гюлбенкяна в Португалии и многие, многие другие. А ведь все они или беженцы, или их потомки. И ни мы, ни они не забудут того, что мы пережили. Да и не сможем забыть. Даже если захотим. Они вошли в нашу генную память. Они часть нашей национальной истории.

Но мы никогда не будем жить геноцидом. Мы никогда не будем чувствовать ущербность нашей нации. Мы не жертвенная нация. Мы потомки тех, кто верил в нашу созидательную миссию, кто верил и в возвращение Арцаха, кто верил в суверенную Армению. Мы потомки героев Сардарапата, который стал символом нации, звучащим как набат для сегодняшних и будущих поколений армян. Мы потомки Нельсона Степаняна, мы соплеменники тех героев, что пали на полях сражений во Второй мировой войне. Мы нигде не бежали с поля боя. И в этом плане беженец применительно к нам не совсем подходящее слово. Оно лишь определяет вынужденность нашего ухода, но не поражение. Знает это и враг. И, конечно, зная наши таланты, нашу созидательную силу, он не питает иллюзий на вымирание нашей нации. И если мы смогли, пережив так много тягот, отстоять свою государственность, да еще расширив и укрепив ее, то мы вправе рассчитывать на более достойное место своей нации, своего народа в истории человеческой цивилизации, в мировой истории.

Санкт-Петербург

3 августа – день рождения уроженца Арцаха, проживающего в Санкт-Петербурге выдающегося прозаика, члена союзов писателей СССР, России, Армении и Арцаха Левона Адяна.

СОВЕТ ВЕТЕРАНОВ АРМЯНСКОЙ НАЦИОНАЛЬНОЙ АВТОНОМИИ С.ПЕТЕРБУРГА ПОЗДРАВЛЯЕТ С ДНЕМ РОЖДЕНИЯ ЛЕВОНА ВОСКАНОВИЧА АДЯНА

– одного из ветеранов нашей петербургской армянской общины, нашего друга, замечательного писателя, прекрасного и доброго Человека.

Для нас большая честь иметь в своих рядах писателя столь большого масштаба, могущего своим творчеством донести до огромной читательской аудитории нашу любовь к Армении, к одному из прекраснейших ее уголков – Арцаху, уроженцем которого он является.

Надо сказать, что Арцах занимает особое место в его творчестве. Как никто другой, он может передать красоту этого края, героику будней его людей, ощутить особенность Арцаха, ставшего символом Армении. И вместе с нами своими делами, жизнью демонстрировать сыновье отношение к нашей второй Родине – России, давшей нам приют в одном из своих лучших городов – Петербурге.

Его творчество пробуждает в читателе самые светлые, самые добрые чувства. Зная лично Л. Адяна, все перипетии его судьбы, нам остается только удивляться, как человеку, прошедшему по жизни сквозь столь жестокие потрясения и трагедии, удается оставаться столь чистым, любвеобильным, полным желания представить мир таким, каким он должен быть, к сожалению, не всегда будучи таким – справедливым, чистым, беззлобным, сопереживающим чужим бедам.

Одни из черных страниц армянской истории, написанные Сумгаитом, Баку, многие читатели узнали из книг Адяна. Но и в них читатель не увидит озлобления, оскорблений в адрес носителей наших бед, желания мстить. Есть непонимание того, как человек может дойти до такой жестокости, которую пришлось многим из нас испытать, но есть понимание того как этого можно было и надо избегать. "Духовность, любовь – главное оружие против зла", – говорит писатель. В одном из своих романов –"Птица с подбитыми крыльями" он говорит: "Это история моей исковерканной жизни, история каждого из героев этой книги, история их исковерканных судеб, их мечтаний и... всепобеждающей любви".

Еще раз хотим подчеркнуть главное в его жизни и творчестве – героическое преодоление жестокостей судьбы и своей жизнью, и своим творчеством. Он смог не ожесточиться, не потерять веру в людей, не потерять вкуса к жизни.

Мы поздравляем Левон, Тебя с Днем рождения! Мы Тебя любим, уважаем и желаем успешных и здоровых лет! И, конечно, ждем твоих новых книг.

И еще: сегодня мы, твои друзья по выслуге лет, поднимем за Тебя бокал армянского вина (благо такие возможности в Питере есть). ЕЩЕ РАЗ ПОЗДРАВЛЯЕМ!

Редакция газеты "Честь имею" присоединяется к поздравлениям.

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ ЧЕСТЬ ИМЕЮ
Խմբագիր՝ Միքայել ՀԱՋՅԱՆ
Ք. Ստեփանակերտ, Գարեգին Նժդեհի-68
Հեռ. +37497265153
E-mail:pativunem@gmail.com
Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում: Նյութերում առկա տվյալների, մեջբերումների և ընդհանրացումների համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում:
Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում:
Տպաքանակը՝ 250: